

Հավելված N 2  
 ՀՀ կառավարության 2017 թվականի  
 հունվարի 12-ի N 122 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Գերակա խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր քայլի կատարման ժամկետը	Հղումը
1	2	3	4	5
ՀՀ արդարադատության նախարարություն	131. Իրավաբանական անձանց պետական գրանցման բնագավառում մատուցվող ծառայությունների բարելավում	<p>1) հասարակական միավորումների, հիմնադրամների և վերակազմակերպումների (բացառությամբ՝ վերակազմավորման եղանակով վերակազմակերպման) գրանցման վերաբերյալ նմուշային փաստաթղթերի կազմում ու հրապարակում</p> <p>2) հասարակական միավորումների, հիմնադրամների և վերակազմակերպումների (բացառությամբ՝ վերակազմավորման եղանակով վերակազմակերպման) էլեկտրոնային դիմումների ընդունում և գրանցում</p>	<p>նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	